

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքեր, կապիտան
Երևանի «Գլաձոր» համալսարանի ընդհանուր
իրավագիտության ամբիոնի հայցորդ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ
ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՅ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգավորման բնագավառում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակումների վերաբերյալ միջազգային իրավական չափորոշիչները և դրանց նշանակությունը:

Տվյալ հոդվածի հետազոտման առարկա են հանդիսանում մարդու և քաղաքացու իրավունքների և սահմանափակումների միջազգային ստանդարտները նորմալ պայմաններում և դրանց նշանակությունը Հայաստանի Հանրապետությունում տվյալ խնդրի լուծման համար: Դրանք կարող են դասակարգվել որպես ընդհանուր և հատուկ մասեր: Հոդվածում վերլուծված է ընդհանուր մասը:

Հիմնարար բառեր - իրավունքներ, ազատություններ, անվտանգություն, սահմանափակում:

Սույն հոդվածի քննարկման առարկան ժողովրդավարական հասարակությունում բնականոն իրավական կարգի պայմաններում կիրառվող միջազգային սահմանափակումներն են: Դրանք կարելի է բաժանել ընդհանուր և հատուկ մասի: Ընդհանուր մասը (սահմանափակումների ընդհանուր կանոնները) ներառում է՝ ա) սահմանափակումների նպատակները, բ) սահմանափակումների ամրագրման որոշակի իրավական ձևի պահանջը, գ) որոշակի հատկանիշների վրա հիմնված հավասարության և խտրականությունների արգելման սկզբունքները: Հատուկ մասը բաղկացած է առանձին իրավունքների և ազատությունների նույնպես կոնկրետ սահմանափակումներից: Հոդվածի ծավալից ելնելով՝ նախընտրելի ենք համարել քննարկել սահմանափակումների ընդհանուր կանոնները:

Նախքան մարդու իրավունքների և ազատությունների չափորոշիչների (ստանդարտների) վերլուծելը անհրաժեշտ է առանձնացնել այն իրավունքները և ազատությունները, որոնք, մեր կարծիքով, ենթակա չեն որևէ սահմանափակման: Դա արված է միջազգային պայմանագրերի և ՄԻԵԳ-ի վճիռների վերլուծության հիման վրա: Գոյություն ունեն անձի էության որոշակի բնութագրիչներ, որոնց նկատմամբ անթույլատրելի են ոտնձգումները և սահմանափակումները: Եվ այս առումով բոլոր մարդիկ համարժեք են:

Բացարձակ իրավունքների և ազատությունների թվին են դասվում՝ ա) խոշտանգումների, ան-

մարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունք (ՄԻՀՀ-ի 5-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 7-րդ հոդված, Եվրոպական դաշնագրի 3-րդ հոդված):

Խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը «իր էությամբ շատ լուրջ իրավունք է»: Միջազգային առումով տվյալ իրավունքն այնքան կարևոր է, որ գոյություն ունեն հատուկ ունիվերսալ և տարածաշրջանային համաձայնագրեր, որոնք կոնկրետացնում են մարդու նկատմամբ ունեցած վերաբերմունքների այն եղանակները, որոնք կարող են ճանաչվել խոշտանգումներ, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ կոնվենցիային Հայաստանը միացել է 1993թ., որով ոչ միայն հաստատել է խոշտանգումները և մարդու նվաստացումը մերժելու, արգելելու իր պատրաստակամությունը, այլև պարտավորվել է իրողություն դարձնել այդ արգելքը: Մասնավորապես, խոշտանգումները ճանաչել որպես քրեական հանցագործություն և սահմանել համապատասխան պատիժ, ինչպես նաև դրանք բացառելու նպատակով պարբերաբար վերանայել հարցաքննությանը և կալանքին, բանտարկությանը վերաբերող օրենքները, կանոնները, մեթոդները և գործելակերպը:

Տանջանքների և վերաբերմունքի ու պատժի այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող տեսակների դեմ 1984 թ. կոնվենցիան արգելում է խոշտանգումները:

Տանջանքը ցանկացած այն գործողությունն է, որով անձին դիտավորյալ պատճառովում է ուժեղ ցավ կամ տառապանք (ֆիզիկական կամ բարոյական)՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություններ ստանալու, նրա կամ երրորդ անձի կողմից կատարված գործողության համար նրան պատժելու, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու համար, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնատար անձի, պաշտոնական կարգավիճակով հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրոյմամբ, նրանց գիտությամբ և լռելյայն համաձայնությամբ:

Եվրոպական դատարանը տարբերում է դաժանության աստիճանի երեք հիմնական հասկացություն՝

ա) խոշտանգում, բ) անմարդկային վերաբերմունք կամ պատիժ, գ) նվաստեցնող վերաբերմունք կամ պատիժ: Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործը (1978 թ.) քննելիս դատարանը վճռեց. «Խոշտանգումը դիտավորյալ գործողությունն է, որն առաջացնում է լուրջ և դաժան տառապանք: Անմարդկային վերաբերմունքը կամ պատիժը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելն է: Նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը այնպիսի վատ վերաբերմունքն է, որը կոչված է՝ գոհի մոտ առաջացնելու վախի, ճնշվածության և անլիարժեքության զգացում, որպեսզի վիրավորի, նվաստացնի կամ կոտրի նրան. բացարձակ իրավունք է և չի կարող վերցվել կամ սահմանափակվել:

բ) ստրկությունից և անազատ վիճակից ազատությունը (ՄԻՀՀ 4-րդ հոդված, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների դաշնագրի 8-րդ հոդված, Եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդված) Ստրկության տակ հասկացվում է մարդուն ինչ-որ մեկի սեփականությունը դարձնելը և դրանից բխող նրա իրավասությունների կորուստը: Անազատ վիճակը ընդգրկում է մի քանի տարբեր՝ ներառյալ ա) աշխատելու պարտականությունը և կամ որոշակի ծառայություններ ցույց տալը, որոնց կատարումն ապահովվում է հարկադիր կարգով, բ) այնպիսի պայմաններում ապրելը, որը պարտադրվել է այլ անձի կամ անձանց կողմից, գ) իր վիճակը փոխելու անհնարիությունը: Առաջին երկու եզրույթներն ընդգրկում են անձին վերահսկելու լայն ձևեր և բնութագրում են «ճնշման պայմանները, որոնք անձը չի կարող փոխել, և որոնցից նա չի կարող խուսափել»: Վերջին երկու եզրույթները շեշտը դնում են աշխատանքների և ծառայությունների ոչ կամավոր բնույթի վրա, որոնք պետք է կատարվեն ժամանակավոր հիմքով և ի լրացումն այլ քաղաքա-

ցիական պարտականությունների:

գ) խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունք (ՄԻՀՀ-ի 8-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 7-րդ հոդված, Եվրոպական դաշնագրի 2-րդ հոդված),

դ) հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի իրավունքը, անմեղ համարվելը, քանի դեռ մեղավորությունը չի սահմանվել դատարանի կողմից (ՄԻՀՀ-ի 11-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 14-րդ հոդված, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդված),

ե) օրենքի հետադարձ ուժի նկատմամբ անընկալունակության (իմունիտետ) իրավունքը (Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 7-րդ հոդված, Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդված),

ե) պայմանագրային պարտականությունների չկատարման համար կալանքի չենթարկվելու իրավունքը (Եվրոպական կոնվենցիայի N4 արձանագրության 1-ին հոդված):

Բացարձակ իրավունքների ցանկը պարզելուց հետո անհրաժեշտ է քննարկել միջազգային իրավական սահմանափակումների ընդհանուր մասի կառուցվածքային տարրերը:

Սահմանափակումների նպատակները

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն այնպես է կառուցված, որ սկզբում հռչակվում են այն հիմնական և համընդհանուր իրավունքները, որոնք պետք է ընկալվեն ազգային օրենսդրությամբ: Այնուհետև ճանաչվում է յուրաքանչյուրի պարտականությունը հասարակության հանդեպ, և որոշվում են հռչակված իրավունքներին առնչվող թույլատրելի սահմանափակումները: ՄԻՀՀ-ի 29-րդ հոդվածն ամենաընդհանուր ձևով սահմանում է՝

«1. Յուրաքանչյուր ոք պարտականություններ ունի այն համայնքի (հասարակության) առջև, ուր և միայն հնարավոր է նրա անձի ազատ և լիարժեք զարգացումը:

2. Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք ենթակա է միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով՝ բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքը երաշխավորելու, ժողովրդական հասարակությունում բարոյականության, հասարակական կարգի և ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջներն ապահովելու նպատակով:

3. Այս իրավունքների և ազատությունների իրականացումը չպետք է հակասի Միացյալ ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին»:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Շատ հեղինակներ գտնում են, որ ՄԻՀՀ-ում սահմանափակումներն առանձնաճանաչում են իրենց ձևակերպումների անորոշությամբ: Ընդհանուր ձևակերպումների ամրագրումը Ռ.Ա. Մյուլերսոնի կարծիքով իր մեջ պարունակում է վտանգներ, եթե ոչ չարաշահումների, ապա համեմայն դեպս պահպանվող հասարակական շահին ոչ համաչափ սահմանափակիչ միջոցներ է ընդունում²:

ՄԻՀՀ-ում հռչակված սահմանափակումների նպատակները առաջացնում են բազմաթիվ վեճեր իրավագետների շրջանում: Մատնանշվում է այնպիսի նպատակի իմացաբանական անհստակության մասին, ինչպիսին է «բարոյականության արդար պահանջը»: Այդ անհստակության վերացման համար առաջարկվում է՝

ա) ձևակերպել բարոյականության կոնկրետ նորմեր և հաստատել դրանք որպես կատարման համար պարտադիր չափորոշիչներ,

բ) օրենսդրությունում բարոյականության արդար պահանջներ եզրույթի փոխարեն կիրառել «բարոյականության համընդհանուր ճանաչում ունեցող նորմեր» եզրույթը³:

Իմ կարծիքով, նման հարցադրումը այնքան էլ ճշգրիտ չէ, քանի որ այդ եզրույթներով սահմանվող հասկացությունների լայնածավալությունը թույլ չի տալիս որոշել հստակ չափորոշիչներ ոչ միայն ազգային օրենսդրությամբ, այլև միջազգային իրավական նորմերով:

ՄԻՀՀ-ի և ՀՀ սահմանադրության սահմանափակումների նպատակների համեմատությունից երևում է՝ դրանք նույնական չեն: Չնայած ՄԻՀՀ-ի վերացական նպատակներին՝ նրանք բոլորը մասնավոր բնույթ են կրում և հումանիզմի կոնտեքստում հազիվ թե կարող են մեկնաբանվել տարածականորեն, ինչը չի կարելի ասել ՀՀ սահմանադրությունում մատնանշված նպատակների մասին: ՄԻՀՀ-ում հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը օգտագործվում է առանձին վերցրած, անձի անվտանգության պաշտպանության իմաստով:

Սահմանափակումների հիմնավորվածության գնահատման համար առավել կարևոր է պարզել այն, որ միջամտությունը կատարվել է օրենքին համապատասխան: Եթե միջամտությունը կատարվել է օրինական հիմքերով, առաջանում է հերթական հարցը՝ որքան էր այն «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»՝ ելնելով ՄԻՀՀ-ով նախատեսված նպատակներից:

Հռչակագիրը «որպես մոդել է ծառայում, որը լայնորեն օգտագործվում է շատ պետությունների կողմից մարդու իրավունքներին վերաբերող սահմանադրության, տարբեր օրենքների և փաստաթղթերի մշակման համար»:

Ոչ պակաս նշանակալից միջազգային փաստաթղթի 1966 թ. «Քաղաքացիական և քաղաքա-

կան իրավունքների մասին միջազգային դաշնագրի» վերլուծությունը թույլ է տալիս անել հետևյալ հետևությունները՝

Առաջին. Դաշնագրում նշվում է, որ «Սույն Դաշնագրի մասնակից որևէ պետությունում չի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթաօրենսդրական ակտերի կամ սովորույթների համաձայն ճանաչվող կամ գոյություն ունեցող որևէ հիմնարար իրավունքի ոչ մի սահմանափակում կամ նվազեցում այն հիմնավորմամբ, թե սույն Դաշնագրում նման իրավունք չի ճանաչվում կամ ճանաչվում է նվազ ծավալով» (Դաշնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետ):

Երկրորդ. Դաշնագրի շատ նորմերում թույլատրվում է կոնկրետ իրավունքի առնչությամբ սահմանել նրա իրականացման շրջանակները: Դա վերաբերում է տեղաշարժման ազատության և բնակության վայրի ազատ ընտրության իրավունքին (12-րդ հոդված), կրոն և համոզմունք ունենալու ազատության իրավունքին (18-րդ հոդված), առանց միջամտության սեփական կարծիք ունենալու իրավունքին (19-րդ հոդված): Սահմանափակումները թույլատրելի են խիստ որոշակի նպատակների համար: Դաշնագրի 12-րդ հոդվածում սահմանված է.

«Որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք և բնակության վայր ընտրելու ազատություն»:

Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, ներառյալ՝ իր սեփական երկրից մեկնելու իրավունք:

Վերը նշված իրավունքները չեն կարող ենթարկվել որևէ սահմանափակման, բացի օրենքով նախատեսված այն սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար և համատեղելի են Դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ:

Այս կետի անհրաժեշտ սահմանափակումների ձևակերպումները ամբողջությամբ, որոշակի հավելումներով և խմբագրմամբ վերաշարադրվել են ՀՀ սահմանադրության 43-րդ հոդվածում, որը վերաբերում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակմանը. դրանք կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակարգում պետական անվտանգության, հասարակական կարգի, *հանցագործությունների կանխման, հանրության* առողջության կամ բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների, *պատվի և քարի համբավի* պաշտպանության համար:

Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր սեփական երկիր մուտք գործելու իրավունքից:

www.journal.lawinsstitute.am

Դաշնագրի 18-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված են հետևյալ սահմանափակումները՝ ա) հասարակական անվտանգության, բ) կարգի, գ) առողջության կամ բարոյականության, դ) այլոց հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Այս փաստաթղթի 4-րդ հոդվածում պարունակվում են նորմեր *արտակարգ իրավիճակներում* մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման վերաբերյալ: Այլ միջազգային փաստաթղթերում նման բան չի ամրագրված:

«Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որը հայտարարված է պաշտոնապես, սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ և չեն հանդիսանում խտրականություն բացառապես ռասայի, մշակի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալալական ծագման հիմքով» (Դաշնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետ): Նույն հոդվածի 2-րդ կետում թվարկված են այն հոդվածները 6, 7, 8 (1-ին և 2-րդ կետեր), 11, 15, 16 և 18, որոնցից որևէ շեղում կատարել չի թույլատրվում:

1966 թ. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում հստակորեն բաժանված են «իրավունքների սահմանափակում» և պետության կողմից իր ստանձնած պարտավորություններից շեղվելու հետ կապված միջոցներ կիրառելու հասկացությունները, ինչը ևս մեկ անգամ հաստատում է սահմանափակումների բացարձակի և հարաբերականի բաժանելու անհրաժեշտությունը:

1966 թ. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրում նախատեսված են տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների սահմանափակումներ: Դաշնագրի 4-րդ հոդվածից հետևում է, որ այդ իրավունքներից օգտվելը ենթակա է սահմանափակումների միայն ա) պետության կողմից ընդունված օրենքի հիման վրա, բ) Դաշնագրին համապատասխան, գ) միայն այնքանով, որքանով այն համատեղելի է նշված իրավունքների բնույթի հետ, դ) բացառապես ժողովրդական հասարակությունում ընդհանուր բարեկեցությանը նպաստելու համար:

Դաշնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ «Չի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթաօրենսդրական ակտերի կամ սովորույթների հիման վրա ցանկացած երկրում ճանաչ-

ված կամ գոյություն ունեցող հիմնարար իրավունքների սահմանափակում կամ նվազեցում այն հիմնավորմամբ, թե սույն Դաշնագիրը նման իրավունքներ չի ճանաչում կամ ճանաչում է նվազ ծավալով»:

Սակայն իր տնտեսական և սոցիալական շահերը պաշտպանելու նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և իր ընտրությամբ արհեստակցական միության անդամակցելու իրավունքը՝ համապատասխան կազմակերպության կանոնների պահպանման միակ պայմանով: Նշված իրավունքը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության կամ հասարակական կարգի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության (հոդված 8, ա կետ):

Նույն հոդվածի 2-րդ կետում սահմանված է. «Սույն հոդվածը չի խոչընդոտում այս իրավունքների իրականացման օրինական սահմանափակումների նախատեսմանն այն անձանց համար, ովքեր մտնում են պետության զինված ուժերի, ոստիկանության կամ վարչակազմի մեջ»:

Այսպիսով, ՄԻՀՀ-ը, ինչպես նաև դաշնագրերն ամրագրում են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման թույլատրելիությունը և չափորոշիչները:

Այլ անհատների իրավունքների և ազատությունների հարգումը էապես կարևոր է և անխուսափելիորեն սահմանափակում է անձի իրավունքները և ազատությունները, քանի որ անձը և նրա իրավունքները չի կարելի դիտարկել մեկուսացված կերպով:

Յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի, որ այլոց իրավունքները ոչ պակաս արժանի են պաշտպանության, քան սեփականը:

Հասարակության նպատակն է իր անդամներից յուրաքանչյուրին տալ միատեսակ հնարավորություններ իր հոգեկան, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար: Այդ իրավունքների լիարժեք իրականացումը պահանջում է պահպանել այլոց իրավունքները, ուստի անձի իրավունքները սահմանափակվում են այլ անձանց հավասար իրավունքներով: Նման սահմանափակումը պետք է մեկնաբանվի այն իմաստով, որ յուրաքանչյուր ոք, ով ունի գում է ուրիշի իրավունքների վրա, չի կարող արդարացնել այն իր իրավունքներին հղում անելով: Սակայն «մարդու իրավունքների սահմանափակումները, որոնք հիմնված են այլոց համբավի վրա, չեն կարող պետության և նրա պաշտոնատար անձանց կողմից օգտագործվել հանրային կարծիքից և քննադատությունից պաշտպանվելիս»:

Քանի որ որևէ մեկի կողմից սահմանված շը-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ջանակները գերազանցելով իր իրավունքներից կամ ազատությունից օգտվելը նշանակում է այլոց իրավունքների և ազատությունների նվազեցում կամ սահմանափակում, օրենքը նպատակ է հետապնդում սահմանել արդար հավասարակշռություն տարբեր անհատների իրավունքների միջև և սահման դնել անհատի կողմից իր իրավունքներից օգտվելու և դրանք չարաշահելու միջև:

Մարդուն մարդուց պաշտպանելը ոչ պակաս կարևոր երաշխիք է, քան պետության կամայականություններից պաշտպանելը:

Կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, մտքի և խղճի ազատությունը օրինակ են ծառայում այն բանին, որ դրանց լիարժեք, անարգել իրացումը կախված է այլ անձանցից, որոնց օրենքը զերծ է պահում այլոց իրավունքները և ազատությունները խախտելուց: Այսպիսով, անձի իրավունքները և ազատություններն այս կամ այն կերպ գուգորդվում են այլոց իրավունքների հետ, և ազգային օրենսդրի խնդիրն է կանխել իրավունքների չարաշահումները և սահմանել արդար հավասարակշռություն տարբեր անհատների իրավունքների միջև: Այն իրավունքները և ազատությունները, որոնք մարդկանց կողմից օգտագործվում են այլ մարդկանց իրավունքները և ազատությունները վերացնելու համար, ենթակա չեն միջազգային իրավունքի և ազգային օրենսդրության պաշտպանությանը:

Բարոյականության արդար պահանջների բավարարումը:

Քանի որ մարդը չի ապրում մեկուսացման մեջ, նա պարտավոր է պահպանել ոչ միայն ուրիշների իրավունքները և ազատությունները, այլև հաշվի առնել բոլորի կողմից ընդունված բարոյական նորմերի պահանջները: Հասարակական բարոյականության նորմերի սկզբունքային նշանակությունը տարբեր ժողովուրդների մոտ և տարբեր պետություններում, ինչպես նաև տարբեր տարածաշրջաններում կարող է լինել ոչ միատեսակ: Խնդրահարույց է բարոյականության միասնական, համամարդկային ընկալման գոյությունը, որն ընդունելի կլինի տարբեր տեսակի հասարակությունների և հոգևոր-մշակութային ավանդույթների համար⁶: Բացի այդ, այն ենթակա է փոփոխությունների պատմության ընթացքում: Մեր կարծիքով, բարոյական հիմքերով մարդու իրավունքների սահմանափակումները պետք է տեղավորվեն խելամիտ շրջանակներում, քանի որ առկա է այն չարաշահելու հնարավորությունը տարբեր պատճառաբանություններով: Իսկ արդյո՞ք իրապես գոյություն ունեն բոլորի կողմից ընդունված, բացարձակ նշանակություն ունեցող բարոյականության կանոններ: Մ. Վեբերը քննարկում է այդ հարցը և հայտնում իր տեսակետը. «Արդյոք կա ճշմարտություն այն բանում, որ աշխարհում որևէ էթիկայով կարելի է

առաջ քաշել իր բովանդակությամբ նույնական պատվիրաններ էրոտիկ և գործնական, ընտանեկան և ծառայողական հարաբերությունների առնչությամբ, սեփական կնոջը, կանաչ վաճառող կնոջը, որդուն, մրցակիցներին, ընկերոջը, ամբաստանյալին վերաբերող հարաբերություններում»⁷: Պատասխանն ակնհայտ է. նման ունիվերսալ էթիկա գոյություն չունի: Իսկ եթե հիմք չկա խոսելու մեկ հասարակության շրջանակներում ունիվերսալ էթիկայի մասին, առավել ևս չկան կանոններ, որոնք ընդունելի կլինեն տարբեր հասարակությունների կողմից: Ուստի կարելի է ասել, որ «...ամեն մի բարոյական ճշմարտություն (նշանակում է նաև պարտադիր է) միայն իր սոցիալ-մշակութային միջավայրում և ճշմարտություն չէ (պարտադիր չէ նրա սահմաններից դուրս)»⁸:

Եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել է, քանի որ բարոյականության պահանջները տարբեր երկրներում շատ տարբեր են. հատկապես անհրաժեշտ է, որ դատարանը հարգի ազգային օրենսդրական մարմինների դատողությունները բարոյականությունը պաշտպանելու միջոցների վերաբերյալ, և փաստեց, որ անհնար է գտնել Եվրոպայի Խորհրդի մեջ մտնող պետությունների իրավակարգում և հասարակական համակարգում բարոյականության միասնական եվրոպական հայեցակարգ:

«Միլլեր և այլք ընդդեմ Շվեյցարիայի» գործով (1988 թ.) Դատարանը նշեց, որ «տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում տարբեր մոտեցումներ են դրսևորվել բարոյականության պահանջների առնչությամբ, հատկապես մեր ժամանակաշրջանում, ինչը բնութագրում է տվյալ ոլորտում կարծիքների էվոլյուցիայով»: Պետական իշխանություններն իրենց երկրներում անմիջականորեն և անընդմեջ շփվում են կյանքի իրողությունների հետ և սկզբունքորեն ունեն ավելի մեծ հնարավորություններ՝ արտահայտվելու այդ պահանջների ճշգրիտ բովանդակության վերաբերյալ: Բարոյականության մոտեցումներով մարդու իրավունքների սահմանափակումները չպետք է դուրս գան խելամիտ շրջանակներից, քանի որ այդ մոտեցումները ենթակա չեն որևէ ճշգրիտ գնահատականի, և այստեղ թաքնված է չարաշահումների վտանգը: Դրա համար պետությունը, որը «հղում է անում հասարակական բարոյականության վրա՝ որպես մարդու իրավունքների սահմանափակման հիմք, ազատությունների սահմանների որոշման ժամանակ նման գործողությունները պետք է որոշակիորեն ցույց տան, որ նման սահմանափակումը էական է հասարակության հիմնական արժեքների նկատմամբ հարգանքին աջակցելու համար»⁹:

Հասարակական կարգ (հասարակական անվտանգություն): Ամբողջությամբ վերցրած «հասարակական կարգ» հասկացությունը կարելի է մեկ-

նաբանել որպես կանոնների ժողովածու, որն ապահովում է հասարակության կյանքը և անվտանգությունը: Մարդու իրավունքների հարգումը հասարակական կարգի մասն է: Հասարակական կարգի ապահովումը ենթադրում է պաշտպանության իրականացում քաղաքացիների անդորրին, կյանքին և առողջությանը կամ նրանց սեփականությանը լուրջ վնաս պատճառելու վտանգի սպառնալիքի դեպքում: Սակայն այդ հայեցակարգը թույլ է տալիս ոչ միանշանակ մեկնաբանություն, և բացի դրանից, այդ հայեցակարգի իմաստը փոխվում է ժամանակի և տարածության մեջ: Հասարակական կարգի խախտումը կարող է լինել նյութական, օրինակ, ցանկացած անօրինական հանրային միջոցառում: Հասարակական կարգի խախտում առանց խախտողների կողմից որևէ ակտիվ գործողության, ինչը կարող է դրսևորվել հավատացյալների զգացմունքներին ուղղված վիրավորանքում: Հայեցակարգը փոփոխվում է ժամանակի մեջ, քանի որ հասարակական կարգը տվյալ հասարակարգում անփոփոխ չէ: Սովորույթների, սոցիալական, քաղաքական ու բարոյական հասկացությունների զարգացումը երբեմն ունակ է արմատապես փոխել կայացած պատկերացումն այն մասին, թե ինչ է հասարակական կարգը: Հայեցակարգը փոփոխվում է տարածության մեջ՝ երկրից երկիր: «Հասարակական կարգ» հասկացության բավարարող և սպառիչ բնորոշում գտնելու դժվարության պատճառով այն ենթադրվում է ներկայացնել հիմնական սկզբունքների ժողովածուի տեսքով, որն արտահայտում է հասարակության բարձր շահերը:

«Հասարակական կարգ» հասկացությունը պետք է դասել այն դրույթների կարգին, որի նպատակն է ապահովել երկրի ներսում խաղաղ հասարակական կյանք, սոցիալական ներդաշնակություն և իշխանությունների որոշումների հարգում: Հասարակական անվտանգության ապահովումն իրենից ներկայացնում է նրա առանձին անդամների կամ սոցիալական խմբերի գործողություններից հասարակությանը պաշտպանելու նպատակով այնպիսի միջոցառումների ձեռնարկում, որոնք շոշափում են հասարակության շահերը:

Ընդհանուր բարեկեցություն: Սովաբար ընդհանուր բարեկեցության տակ հասկացվում է հասարակության տնտեսական և սոցիալական բարեկեցությունը¹⁰:

Քաղաքակրթության առաջընթացի հետ զուգընթաց «ընդհանուր բարեկեցության» հայեցակարգն արագ փոխվում է դեպի այդ հասկացության ընդլայնման կողմը: Արդյունքում անձի անձեռնմխելիության վերաբերյալ հին և ավելի նեղ պատկերացումն իր տեղը զիջում է ողջ հասարակության կոլեկտիվ շահերի ավելի լայն հասկացությանը: Իսկ դա հնարավորություն է ընձեռնում պետությանը

նր ընդունել օրենքներ, որոնք անհրաժեշտ են սոցիալ-տնտեսական բարեկեցության և ողջ հասարակության զարգացման համար, ինչպես նաև օրենքներ բնակության միջավայրի և բնակչության առողջության մասին:

Ողջ հասարակության օգտին արված ցանկացած օրինական սահմանափակում, որն ուղղված է հասարակական շահերի պաշտպանությանը, պետք է ավելի վեր դասվի քան անձնական շահերը: Հասարակական շահերի աստիճանը պետք է որոշի ազատությունների սահմանափակման աստիճանը, որպեսզի մեծ սահմանափակման օրինականությունը կանոնակարգվի հասարակության շահերի կարևորությամբ: Ընդհանուր բարեկեցության շահերից ելնելով՝ սահմանափակումները կիրառելի են գույքը տիրապետելու իրավունքի նկատմամբ, ինչը ներկայումս չի դիտվում որպես սրբազան իրավունք, այլ դիտվում է որպես սոցիալական գործառույթ, որը կախման մեջ է համազգային շահերից և ենթակա է նրան: Դրա հետևանքով ներկայումս ճանաչվում է այդ իրավունքից օգտվելու վրա սահմանափակումներ դնելու անհրաժեշտությունը, օրինակ, հասարակական կարիքների համար հատուցմամբ վերցնելու, ազգայնացման ձևով:

Պետական (ազգային) անվտանգություն: Պետությունը ստեղծվում է ժողովրդի կողմից իր բարեկեցության ապահովման և յուրաքանչյուր մարդու իրավունքների պաշտպանության համար, որը փոխադարձ բնույթ է կրում այլոց իրավունքների առնչությամբ: «Պետական անվտանգություն» հասկացությունը վերաբերում է այն միջոցներին, որոնք օրինականացված են արտաքին ոտնձգություններից տարածքային ամբողջականության և ազգային անկախության ապահովման նպատակով: Սահմանափակվում է ցանկացած գործունեություն, ինչը կարող է վտանգել պետության գոյությունը: Սակայն պետական (ազգային) անվտանգության վրա հղում չի կարելի անել՝ ա) որպես պատճառ սահմանափակումներ մտցնելու, երբ խոսքը գնում է օրենքի կամ իրավակարգի սոսկ տեղական կամ հարաբերականորեն մեկուսացված վտանգի վերացմանը, բ) որպես առիթ մտցնելու կամայական և անորոշ սահմանափակումներ, գ) որպեսզի արդարացվեն այն միջոցները, որոնց նպատակն է ճնշել ընդդիմությանը կամ սեփական ժողովրդի նկատմամբ իրականացվող հանցավոր բռնաճնշիչ պրակտիկան¹¹: Ամեն դեպքում անհրաժեշտ է սահմանել ուղղակի կապը մարդու վարքագծի և պետության անվտանգության սպառնալիքների միջև:

Առողջության պահպանություն: Առողջություն եզրույթը մեր ուսումնասիրությունում ճշգրտորեն համընկնում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կանոնակարգի ներածության հետ, որտեղ «առողջությունը» բնորոշվում է որպես լիարժեք ֆիզիկական, մտավոր և սո-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ցիալական բարեկեցություն: Առողջության իրավունքը կարելի է դիտել որպես անձնական անվտանգության իրավունքի բաղադրիչ և անձի կարևոր իրավունքներից: Ուստի պետության խնդիրն է միջոցներ ձեռնարկել, որոնց նպատակն է պահպանել բնակչության առողջությունը:

Հանրային առողջության պահպանումը կարող է հիմք հանդիսանալ՝ սահմանափակելու որոշ իրավունքներ, որպեսզի բնակչության և անհատների առողջությանը լուրջ վտանգի առկայության դեպքում պետությանը հնարավորություն ընձեռվի միջոցներ ձեռնարկելու այդ կապակցությամբ: Այդ միջոցները կոչված են կանխարգելելու հիվանդությունների տարածումը:

Յուրաքանչյուր ոք պարտավոր է տեղյակ պահել առողջապահության մարմիններին իր վարակիչ հիվանդության մասին, կամ եթե նա վարակվել է: Նա ենթակա է բժշկական զննման, բուժման, բժիշկների կողմից հետևելուն, մեկուսացման կամ ստացիոնար բուժման:

Անհրաժեշտ է նշել, որ պարտադիր մեկուսացումը կամ հիվանդանոցային բուժումը նման դեպքերում հանգեցնում է անձի տեղաշարժման ազատության և ազատության ու անձեռնմխելիության իրավունքների սահմանափակմանը:

Ամփոփելով, կարելի է հանգել հետևյալ եզրահանգումներին.

1. Սահմանափակումներին վերաբերող հասկացություններին և եզրույթներին վերաբերող իրական իմաստը կարելի է ըմբռնել միայն էմպիրիկ եղանակով՝ հաշվի առնելով ժամանակակից միջազգային հանրության կյանքի մշտապես փոփոխվող հանգամանքները և պայմանները:

2. Կոնկրետ պետության նկատմամբ միջազգային սկզբունքների կիրառումը պահանջում է հաշվի առնել նրա հասարակական կարգի բոլոր բազմազան գործոնները, որտեղ անցյալի հոգևոր ավանդները ներդաշնակորեն պետք է համատեղվեն այն դինամիկ զարգացման հետ, ինչն անհրաժեշտ է ազգի ողջ ներուժի լիարժեք իրացման համար, որտեղ անպայմանորեն կպահպանվի ժողովրդավարական հասարակությունում անձի իրավունքների ու ազատությունների և, ամբողջությամբ վերցրած, հասարակության բարեկեցության միջև արդարացի հավասարակշռությունը:

Ամեն դեպքում Եվրոպական դատարանը նշում է, որ «ցանկացած սահմանափակման անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հավաստվի»¹²:

¹ Տե՛ս Գոմիեն Դ. Путьеводитель по Европейской конвенции о защите прав человека. Страсбург, 1994. С.14.

² Տե՛ս Մյուլլերսոն Ք.А. Права человека: идеи, нормы, реальность. - М.: 1991. С. 86.

³ Տե՛ս Բարանով Վ.М. “Удовлетворение справедливых требований морали” как цель ограничения прав и свобод человека // Теория и практика ограничения прав человека по российскому законодательству и международному праву. Ч. I. С.19–30.

⁴ Տե՛ս Կարտաշկին Վ.А. Россия и Всеобщая Декларация прав человека // Московский журнал международного права. 1998. №2. С 244.

⁵ Տե՛ս Տիրաքուզսկիե սկզբունքները լուծարման և զրկմանից հետո իրավունքների վերականգնմանը // Վեստնիկ ՄԳՄ. Տերիա «Քրաւ». 1992. №4. Ս. 62.

⁶ Տե՛ս Բեկնազար-Յոզբաշեւ Կ.Բ. Права человека и международное право. М., 1996. С. 34.

⁷ Տե՛ս Վեբեր Մ. Избранные произведения. М., 1990. С. 694.

⁸ Տե՛ս Կիրոսրաւով Յ. Վ. Основы философии права. М., 1997. С. 415.

⁹ Տե՛ս Տիրաքուզսկիե սկզբունքները լուծարման և զրկմանից հետո իրավունքների վերականգնմանը // Վեստնիկ ՄԳՄ. Տերիա «Քրաւ». 1992. №4. Ս. 61.

¹⁰ Տե՛ս Դալլես Է.-Ի. А. Свобода личности в праве. Исследование по вопросу об обязанностях личности перед обществом и ограничениях прав и свобод человека по статье 29 Всеобщей декларации прав человека. ООН. Нью-Йорк, 1993. С. 86.

¹¹ Տե՛ս Տիրաքուզսկիե սկզբունքները լուծարման և զրկմանից հետո իրավունքների վերականգնմանը // Վեստնիկ ՄԳՄ. Տերիա «Քրաւ». 1992. №4. Ս. 61.

¹² Տե՛ս Դելո Փոլտ ըրոտիվ Գերմանիա զտ 26 սեպտեմբր 1995 ց. /Եւրոպեյսկի Տւտ ըր ըրաւաւ իրաւաւ իրաւաւ. Իզբրաննե ըրաւաւ. Վ 2 ց. Կ.2. Մ., 2000. Ս. 108.

Сурен Саргсян
Пограничные войска СНБ РА,
соискатель кафедры общей юриспруденции
Ереванского университета “Гладзор”

РЕЗЮМЕ

Значение международных стандартов ограничения основных прав и свобод для конституционного регулирования Республики Армения.

Предметом исследования данной статьи являются международные стандарты ограничения прав и свобод человека и гражданина в нормальных ситуациях и их значения для конституционного регулирования данной проблемы в Республике Армения. Они могут быть классифицированы на общую или частную части. В статье анализируется общая часть.

Ключевые слова: права, свободы, безопасность, ограничения.

Suren Sargsyan
Border troops of SNS RA,
Post graduate student of Law department,
Yerevan «Gladzor» University

SUMMARY

The importance of international standarts about restricting of the fundamental human and civil rights and freedoms for constitutional regulation of the Republic of Armenia.

The subject of this article is the international law standards about restricting of the fundamental human and civil rights and freedoms in normal situation. They can be classified to general part and special part. In this article we have analyzed only the general part. This standarts have been fixed in the Costitution of the Republic of Armenia.

Keywords: rights, freedoms, security, restrictions.